

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոց

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդ՝ Վազգանուշ Հրաչիկի Ասրիբաբայան

2024-2029 ուսումնական տարի

## Դպրոցի մասին տեղեկատվություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունք միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական, տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության
Դպրոցը սկսել է իր գործունեությունը 1977 թվականից՝ որպես ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի միջնակարգ դպրոց
Դպրոցը 2002 թվականին վերակազմակերպվել է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և հանդիսանում է իրավահաջորդը Լուսակունք գյուղի միջնակարգ դպրոցի: 2024թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոց
Պետռեգիստրի գրանցման վկայական 03 Ա 05518 Գրանցման համար- 70.210.00876
Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ:
Դպրոցի հասցեն՝ 1փ տ112
Դպրոցի էլեկտրոնային հասցեն lusakunq@schools.am

## Դպրոցի զարգացման ծրագրի կազման իրավական հիմքերն են՝

ՀՀ ԿԳՄՍ Նախարարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 22-Ի N 35-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին «08» փետրվարի 2024 թ. N 09-Ն հրամանը
ՀՀ Հանրակրթության մասին օրենքը
ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը
ՀՀ Կառավարության 16 փետրվարի 2023թվականի N 216-Ն որոշումը Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին
ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները» սահմանելու մասին 5 օգոստոսի 2022 թ. N 30-Ն հրամանը:
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 5 դեկտեմբերի 2022 թ. N76-Ն հրամանը

Հիմք է ընդունվել նաև
Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվությունները
Դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝
*Աշակերտական Խորհրդի առաջարկությունները.*
Ներդպրոցական մրցույթների թվաքանակի ավելացում / առարկայական, սպորտային
Պատմամշակույթային դասասենյակի ստեղծում
Գրադարանի վերազինում/ Էլեկտրոնային գրադարանի ստեղծում
Երաժշտական գոծիքի առկայություն

Մարզագույքի վերազինում
Հրաձգարանի  ստեղծում
Դպրոցում ունենալ ջերմոց,որի մշակմանը կօգնեն բարձր դասարանի աշակերտները և բերքի վաճառքից ստացված եկամուտը կօգտագործվի դպրոցին ապահովվելու անհրաժեշտ նյութերով և դասասենյակներով ,որը կնպաստի ավելի հետաքրքիր և ավելի արդյունավետ  դասեր անցկացնելու համար,և որ ամենակարևորներից  է տարրական դասարաններին առողջ սննդով ապահովելը

*Մանկավարժական խորհրդի առաջարկությունները.*

Բացել արհեստագործական խմբակ
Ուսումնական դիդակտիկ նյութեր
Գրադարանի վերազինում/ Էլեկտրոնային գրադարանի ստեղծում
Դպրոցում ՀՊՉ-Ի դրույթների շրջանակներում առկա վերապատրաստումների կազմակերպում հրավիրված մասնագետների միջոցով

*Ծնողխորհրդի առաջարկությունները*

Հնարավորության սահմաններում շենքային պայմանների բարելավում, դպրոցական գույքի և տեխնիկական միջոցների վերազինում
Հաճախակի կազմակերպել բնապահպահպանությանը ուղղված միջոցառումներ

**Դպրոցի զարգացման ծրագրի կառուցվածքն է՝**

1. Իրավիճակի վերլուծությունը.
1. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները.
2) վերլուծված են հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները.
3) նկարագրված են համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը.
4) ներկայացված են հաստատության խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը.
5) վերլուծված է հաստատության շենքային պայմանների նպատակային գործածությունը, նկարագրված են ուժեղ կողմերը և թերությունները:
2. Նպատակների և խնդիրների սահմանումը.

## 1. Իրավիճակի վերլուծություն

### 1.1.Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վերլուծությունը

Նոր հանրակրթական պետական չափորոշիչով կրթության հիմնական նպատակը սոցիալական և մասնագիտական կարողություններով անհատի ձևավորումն է, ով կարող է պատասխանատվության զգացումով, ստեղծագործելու ցանկությամբ ինքնորոշվելու արագ փոփոխվող աշխարհում,: Ուստի դպրոցն արդյունավետ իրականացնելով պահանջները՝ բավարարել սովորողների կրթական կարիքները՝ տրամադրել նրանց անհրաժեշտ գիտելիքներ և գործիքներ, հետագա կյանքում՝ որպես անհատ և հասարակության անդամ ներկայանալու:

Սովորողների կրթական կարիքների բավարարման առաջնային ռազմավարությունը ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպումն և իրականացնումն է համագործակցելով կրթության բոլոր մասնակիցների հետ: Հետևապես դպրոցի զարգացման ծրագրի հիմքում դրված է իրականացվող ուսուցման և դաստիարակության գործընթացների վերլուծության, կրթական համակարգի զարգացման պետական քաղաքականության առանցքային նշանակություն ունեցող հանրակրթական ուսումնական հաստատության և մանկավարժների գործունեության, սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների գնահատման գործընթացների բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները Դրա խնդիրներն են՝

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության գնահատումը.
- Ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպման անհրաժեշտ պայմանների, դրանց բարելավմանն ուղղված գործողությունների գնահատումը.
- Հանրակրթական ծրագրերի իրականացման, դասավանդման մեթոդների, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը.
- Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովումը, հաշվետվողականության մեխանիզմների բարելավումը .
- Վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և նրանց ծնողների, շահագրգիռ կազմակերպությունների ներգրավումը դպրոցի գործունեության գնահատման գործընթացում:

Վերոնշյալը նպաստում է դպրոցի ընդհանուր գործունեության համակողմանի զարգացմանը:

Ուսումնադաստիարակչական գործընթացները վերլուծված են 2020-2021, 2021-2022, 2022-2023,2023-2024 ուստարիների տվյալների հիման վրա:Լուսակունքի միջնակարգ դպրոցն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված լիցենզիաների համաձայն

*տարրական ընդհանուր 1-ին աստիճանի հանրակրթական ծրագիր, / N0397- սահմանային տեղերի թիվը 100 /*
*հիմնական ընդհանուր 2-րդ աստիճանի հանրակրթական ծրագիր, / N390- սահմանային տեղերի թիվը 250 /*
*միջնակարգ ընդհանուր 3-րդ աստիճանի հանրակրթական ծրագիր, / N0312 սահմանային տեղերի թիվը 120 /*
*նախադպրոցական հանրակրթական ծրագիր, / N0739 սահմանային տեղերի թիվը 27/*

- Դպրոցում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերի: Շենքի հզորությունը՝ 270 սովորող
- 2024-2025 ուստարում 10-րդ դասարանի սովորողներով ձևավորվել են երկու՝բնագիտական / սովորողները ընտրել են նպատակային ծրագրով՝ֆիզիկա և կենսաբանություն առարկաները/ և ընդհանուր հիմնական ուսումնական խմբեր:







Սովորողների թվի նվազումը պայմանավորված է համայնքում երեխաների ցածր ծնելիությամբ և արտագաղթով:

- 2023-2024 ուստարում ներդրվել է ՀՀ Կառավարության սահմանած հանրակրթական պետական նոր չափորոշիչը 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում, 2024- 2025 ուստարում՝ 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ դասարաններում:Նոր չափորոշիչի պահանջով սովորողների ուսուցումը կազմակերպվել է ուսումնական պլանի շրջանակներում,որը մշակվել է՝ 1,4,9,11 և 12-րդ դասարանների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա,որն ունի երկու բաղադրիչ՝ պետական և դպրոցական: Նոր չափորոշիչ ներդրված 2,3,5,6,7,8-րդ դասարաններում՝ ուսպլանի հիմքը՝ ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքն և ուսպլանի կազմման կանոններն են, որն ունի երեք բաղադրիչ՝պետական,դպրոցական,անհատական,իսկ 10-րդ դասարանում նաև ծնողների դիմումներում ամրագրված սովորողների ընտրությամբ նպատակային կամ հիմնական ծրագրերի ուսումնասիրության անհրաժեշտ ուսումնական առարկաները. ընդհանուր ապահովվելով սովորողների շաբաթական նորմատիվ բեռնվածությունը: Նոր չափորոշիչի ներդրումը իր հետ բերել է ուսուցման տարբեր մոտեցումներ՝ սովորողակենտրոն ուսուցում,ուսումնական նախագծեր, արտադասարանական պարտադիր ուսուցում,երկարօրյա ուսուցում, գնահատման նոր տեսակներ, որը ենթադրում է բարեփոխումներ ապահովելով ուսուցման նկատմամբ սովորողների նորովի մոտեցումները և սահմանված ակնկալվող վերջնարդյունքներով կարողունակությունների ձևավորումը՝ **սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, մաթեմատիկական և գիտատեխնիկական, տնտեսական:**

- Նախագծային ուսուցում.2023-2024ուստարի՝ «Աղբի այրման բացասական հետևանքներըև դրանց մասին տեղեկատվության պակասը մեր համայնքում»-12սովորող, «Քիմիական նյութերի բաղադրությունը մթնոլորտում»-13սովորող:
  2024-2025ուստար. «Ավելի հարմարավետ հաղորդակցություն SLACK հարթակում»- 7սովորող, «Կիբեռնետիկայի հիմունքները»- 6 սովորող, «Քաղաքական գաղափարախոսական ժամանակակից ուղղությունները»- 6սովորող
- Արտադասարանականուսուցում.2023-2024ուստարի «Առողջ ապրելակերպ» 5-րդ դաս.-16սովորող,7-րդ դաս. 24սովորող, «Ընթերցանական հմտությունների զարգացում»2-րդ դաս.-18սովորող,«Շախմատը դպրոցում»7-րդ դաս.-17սովորող,«Ֆուտբոլ»5-րդ դաս.-16սովորող,
  2024-2025ուստարի.»Առողջապրելակերպ»5-րդ դաս.-20սովորող և 7-րդ դասարանում 15 սովորող,«Երևակ»աշխարհագրություն-10սովորող, «Ընթերցանական հմտությունների զարգացում»2-րդ դաս.-18սովորող, «Մասնագիտական կողմնորոշում» 10-րդ դաս.-10սովորող, 8-րդ դաս.-24սովորող, «Ընթերցանություն»3-րդ դաս.-19սովորող, «Շախմատը դպրոցում»8-րդ դաս.-17սովորող, «Ֆուտբոլ»7-րդ դաս. -20սովորող «Грамотей »- 10-րդ դասարանում 10սովորող
- Երկարօրյա ուսուցում. դպրոցում չի կազմակերպվել, քանի որ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված Կարգի համաձայն չի արձանագրվել ուսումնառության ցածր արդյունքներ
- Ներառական կրթություն դպրոցում չի կազմակերպվել,քանի որ ուստարիների ընթացքում դպրոցում չեն սովորել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողներ
- Պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողներ չեն արձանագրվել: Դպրոցում չեն սովորել նաև այլ ազգի պատկանող սովորողներ
- Սովորողների հաշվառում. Ուսումնական տարիների ընթացքում սովորողների հաշվառումը կազմակերպվել է սահմանված Կարգով՝ սովորողները հանձնել են լրացուցիչ գրավոր առաջադրանքները և փոխադրվել հաջորդ դասարան՝2020-2021ուստարի-1սովորող,2023-2022ուստարի-0, 2022-2023ուստարի-2սովորող, 2023-2024ուստարի 2սովորող
- Հեռավար, տնային ուսուցում չեն կազմակերպվել- անհրաժեշտություն չի եղել
- Սովորողների գնահատման նոր տեսակներ. չափորոշիչի պահանջների համաձայն սովորողների գնահատման նոր տեսակները 2023-2024ուստարում ներդրվել են 2,5,7 դասարաններում: Ուսուցիչների կողմից կիրառվել են հայտորոշիչ, ձևավորվող, ամփոփիչ(միավորային և բնութագրող) գնահատման տեսակները,որոնց միջոցով հնարավոր է եղել բացահայտել սովորողների նախնական գիտելիքները, ձեռքբերումները, բացթողումները:Դրանց հիմքով կատարվել են մեթոդ միավորումների նիստերում վերլուծություններ և բարելավման նպատակով կազմակերպվել աշխատանքներ: Գնահատման ձևերը և մեթոդները ընտրել են ուսուցիչները, քննարկվել է մեթոդ միավումներում և որոշում կայացվել մանկավարժական խորհրդում: Գնահատման նոր տեսակով դնահատվել են 2-րդ դաս. թվով 18 սովորող, 5-րդ դաս.թվով 16 սովորող, 7-րդ դաս.թվով 25 սովորող: 2024-2025ուստարում գնահատման նոր տեսակները կիրառվում են՝2,3,5,6,7,8,10-րդ դասարաններում, սովորողների ընդհանուր թիվը՝ 122 սովորող:
- Առարկայական օլիմպիադաների մասնակցություն. Կարևորում եմ սովորողների մասնակցությունը օլիմպիադաներին,քանի որ դա ևս հնարավորություն է տալիս սովորողին կիրառել ձեռք բերված գիտելիքները, հայտնաբերել բացթողումները: Վերջին 3 ուսումնական տարիների ընթացքում սովորողները մասնակցել են դպրոցական փուլում բոլոր առարկաներից թվով 78 սովորող, մարզային փուլում առարկաներ՝ՀԵՊ-7սովորող,Աշխարհագրություն-2 սովորող,Գրականություն-3 սովորող կենսաբանություն -2,հանրապետական փուլում մասնակիցներ չենք ունեցել: 2 աշակերտներ աշխարհագրություն առարկայից մասնակցել են ԵՊՀ-ի կողմից կազմակերպած օլիմպիադային աշակերտներից 1-ը բարձր միավորներ հավաքելով արժանացել է պատվոգրի: Դպրոցում գործող Արմաթ ինժիներական լաբորատորիա հաճախող սաներից 5-ը մասնակցել են Դիջիկողին, և անցել են մարզային փուլ:ԱՅԲ-ի կողմից կազմակերպած նախագծային աշխատանքից «Աղբի այրման բացասական հետևանքները մթնոլորտի վրա» թեմայով Գեղարքունիքի մարզում գրավել են առաջին տեղը և մասնակցել միջոցառմանը, «Տեխնովացիա

աղջիկներ» մրցույթին, որտեղ ներկայացվել է արհեստական բանականությամբ աշխատող «Խելացի փայտ», որը տալիս է բավականին լուծումներ դժվար տեղաշարժվող մարդկանց համար։ Աղջիկները գրավել են  հանրապետական փուլում՝ առաջին տեղը

- Կրթական ծրագրերի շրջանակներում այլ մրցույթների մասնակցություն. «Մեղու»-27սովորող, «Կենգուրու»-29սովորող
- Մասնագիտական կողմնորոշում. ուսումնական տարիների ընթացքում համակողմանի  աշխատանքներ են կազմակերպվում սովորողների համար մասնագիտությունների ընտրության նպատակով։ Կազմակերպվել են այցեր միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլ կազմակերպություններ,ինչպես նաև հանդիպումներ դպրոցում  տարբեր մասնագետների հետ, իրականացվել են քննարկումներ, գործնական աշխատանքներ։Այս ուղղությամբ կարևորվում է 2024-2025ուստարվանից ներդրված «Մասնագիտական կողմնորոշում» արտադասարանական ուսուցումը,որը լրացուցիչ միջոց է սովորողների ապագայի նկատմամբ նրանց վերաբերմունքի և դիրքորոշման համար։
- 12-րդ դասարանի սովորողի հայեցողության ժամեր.  12-րդ դասարանների սովորողների հայեցողության ժամերի օգտագործման արդյունավետության համար սովորողներին տրվում են խորհրդատվություններ և անհրաժեշտ առկա ուսումնական ռեսուրսները։
- 2020 թվականից դպրոցում գործում է  նաև նախակրթարան,  ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ  և «Դպրոցական բարելավման» ծրագրի համագործակցությամբ։ Նախակրթարանն  ամբողջովին վերանորոգվել  և համալրվել է նոր գույքով։ Նախակրթարանի մուտքը առանձնացված է, այն ունի մեկ դասասենյակ, միջանցք/ հանդերձարան, սանհանգույց,։ Այս պահի դրությամբ գործում է մեկ խումբ, որում ընդգրկված է  16 սան։
- Ուսուցիչների մասնագիտական զարգացում. սովորողների ուսուցման կազմակերպման և ուսման որակի բարձրացման համար կարևորում եմ ուսուցիչների մասնագիտական զարգացումը, որը զարգացումը տալիս է հնարավորություն կազմակերպել սովորողների ուսուցումը նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան՝ ապահովելով՝  ուսումնական և ճանաչողական գործունեության կազմակերպում, ժամանակակից ՏՀՏ-ների կիրառում, ներգրավածության ապահովում, առողջության և իրավունքների  պահպանում,սովորողների առանձնահատկություններին համապատասխան խելամիտ հարմարեցումների ներդնում, նոր մեթոդների ուսումնասիրություն և կիրառում, ուսուցման որակի բարելավում։ Սովորողների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դասաժամերին ուսուցիչները կիրառում են ուսուցման նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ՝ աշակերտակենտրոն, ինտերակտիվ, շրջված դասարան և այլն։
- Դաստիարակչական գործընթաց. ուսումնառության ընթացքում սովորողների ուսուցմանը համարժեք է նաև դաստիարակությունը,որը անհատականության համապարփակ զարգացման գործընթաց է, որն ուղղված է սովորողի ամբողջական անհատականության ձևավորմանն ու զարգացմանը և նրա նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը. Դաստիրակության ուղղություններն են՝ իրավական, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական,քաղաքացիական,ռազմահայրենասիրական և այլն։
    - աշխատանքային դաստիարակություն նպաստում է  աշխատանքային գործունեության կազմակերպման և խթանմանն ուղղված սովորողների հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքին, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, նախաձեռնողականությանը։
    - ռազմահայրենասիրական դաստիարակություն. Նպաստում է ձևավորել հայրենասեր,ազգային արժանապատվություն ունեցող,սեփական մշակույթի նկատմամբ հարգանք ունեցող,ազնիվ և պատասխանատու անհատների
    - բարոյական դաստիարակություն – ապահովում է,  Հայրենիքի, մարդկանց, սեփական պարտականությունների և սեփական անձի, հասարակության սոցիալապես անհրաժեշտ պահանջների գիտակցումը և ձևավորում յուրաքանչյուր սովորողի  անհատականության ներքին խթանները՝ պարտականություն, պատիվ, խիղճ, արժանապատվություն։
    - ֆիզիկական դաստիարակություն - նպաստում է  սովորողների  կարողությունների ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման, նրանց գործունեությունը բարելավելու և առողջ ապրելակերպ ստեղծելու նպատակով և այլն։

Սովորողների դաստիարակության խնդիրների լուծման ուղիներն իրականացվում են դասարանում, արտադասարանային աշխատանքներում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:Ուսուցիչները, դասղեկները լինելով սովորողների դպրոցական կյանքի հիմնական կազմակերպիչները ուսուցմանը զուգահեռ ապահովում են սովորողների դաստիարակության շարունակականությունը:

- Իրավունքները պաշտպանված,բռնությունից զերծ, անվտանգ միջավայր. անվտանգ կենսագործունեություն ծավալելու,առողջ ապրելու, բռնության ցանկացած դրսևորում կանխարգելելու նպատակով դպրոցի առաջնային խնդիրներից է սովորողների ուսումնառության ընթացքում կազմակերպվել նրանց համար ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջապահական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետությանը միտված ծրագրեր և միջոցառումներ:Ուսումնական տարիների ընթացքում անհրաժեշտ և պարտադիր սկզբունքայնությամբ՝
  - իրականացվել է ամենօրյա վերահսկողություն մանկավարժական համակազմի միջոցով,համագործակցելով ծնողների հետ
  - անվտանգ միջավայրի պահպանման և ստեղծված իրավիճակների մասով ծնողների համար կազմակերպվել են իրազեկման միջոցառումներ
  - կազմակերպվել են հանդիպումներ,քննարկումներ երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման համար:
  - իրականացվել են ծրագրեր Ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ՝վնասակար սովորությունների, ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու համար:
  - իրակացվել են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց կանխարգելման աշխատանքներ և կազմակերպվել կանխարգելման միջոցառումներ
  - ՀՀ ՆԳՆ ԱԻ վարչության ախատակիցների կողմից իրականացվել են գործնական պարապմունքներ, որի արդյունքում դպրոցի աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Նրանք տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների մասին,տիրապետում դրանց օգտագործման կանոններին
- Ծնողների ներգրավածություն. սովորողների ուսումնառության կազմակերպման և որակի բարելավման կարևոր գործոնը ծնողների ներգրավածությունն է,որի համար անհրաժեշտ է զարգացնել ծնողների հետ շփման մոտեցումները, խրախուսել նրանց ակտիվ ներգրավվածությունը իրենց երեխայի կրթության մեջ կանոնավոր հաճախումների, ուսման առաջընթացի, ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության, տեղեկատվությունների լիարժեք տրամադրման միջոցով: Ծնողների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս ամբողջական մոտեցում ցուցաբերել կրթությանը, քանի որ նրանք կարող ենհստակ պատկերացումներ տրամադրել սովորողի ուժեղ, թույլ կողմերի,ուսման նկատմամբ վերաբերմունքի մասին:
- Ներդպրոցական վերահսկողություն. ներդպրոցական վերահսկողությունը գնահատվել է կարևոր գործիք և դրա արդյունավետ կիրառումը նպաստել է սովորողների ուսումնառության և ուսուցիչների մասնագիտական պրակտիկայի բարելավմանը: Սովորողների ուսման որակի, մնացորդային գիտելիքների,ձևավորված կարողունակությունների մակարդակը գնահատելու համար կազմակերպվել են մշտադիտարկումներ,որոնց շրջանակներում բոլոր դասարաններում իրականացվել են դասալսումներ ըստ սահմանված քանակի, յուրաքաչյուր կիսամյակը մեկ անգամ սովորողներին տրվել տնօրենության կողմից գրավոր առաջադրանքներ: Գրավոր առաջադրանքները կազմվել են մեթոդական միավորումների կողմից: Մշտադիտարկումների արդյունքների ցուցանիշները վերլուծվել և համեմատվել են կիսամյակային,տարեկան և քննական ցուցանիշների հետ, մանկավարժական խորհրդում ներկայացվել ուսման որակը, հաջողությունները, չկատարված աշխատանքները և հետագա բարելավման անհրաժեշտ գործողությունները: Մշտադիտարկման ամբողջական նկարագրի համար անհրաժեշտ տվյալներ ներկայացվել են նաև ուսուցիչների, ուսումնական գծով տնօրենի տեղակալի, ՄԿԱ-ի գծով տեղակալի, մեթոդական միավորումների նախագահների կողմից հաշվետվությունների ձևով:

*Տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների վերլուծություն*

| Առարկա | Ուստարի | Մասն.սով.թիվ | Գնահ.4 | Գնահ.5 | Գնահ.6 | Գնահ.7 | Գնահ.8 | Գնահ.9 | Միջ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հ.լեզու** | **2021-2022** | 123 | 0 | 32 | 0 | 32 | 45 | 14 | 7,19 |
| **Մաթեմ.** | 2021-2022 | 123 | 22 | 24 | 11 | 3 | 30 | 33 | 6,76 |
| **Պատմ.** | 2021-2022 | 123 | 10 | 12 | 8 | 2 | 32 | 59 | 7,71 |
| **Հ.լեզու** | **2022-2023** | 125 | 11 | 0 | 2 | 49 | 23 | 40 | 7,54 |
| **Մաթեմ.** | 2022-2023 | 125 | 16 | 12 | 0 | 23 | 29 | 43 | 7,23 |
| **Պատմ.** | 2022-2023 | 125 | 0 | 13 | 0 | 30 | 42 | 40 | 7,77 |
| **Հ.լեզու** | **2023-2024** | 123 | 0 | 15 | 4 | 25 | 30 | 49 | 7,76 |
| **Մաթեմ.** | 2023-2024 | 123 | 4 | 23 | 11 | 38 | 10 | 37 | 7,12 |
| **Պատմ.** | 2023-2024 | 123 | 5 | 16 | 23 | 15 | 31 | 33 | 10.76 |







***2023-2024 ուստարվա 4-րդ,9-րդ,12-րդ դասարանների սովորողների վերջնարդյունքների համեմատական վերլուծություն***

| Ուսումնական առարկաներ | Սովորողների թիվը | Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը |
|---|---|---|---|

| | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 12-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 12-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 12-րդ դաս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայոց լեզու | | 25 | 9 | | 7 | 8 | | 16,2 | 17,9 |
| Մայրենի | 17 | | | 8 | | | 8,35 | | |
| Գրականություն | | 25 | 9 | | 7 | 7 | | 17,2 | |
| Ռուսացլեզու | 17 | 25 | 9 | 7 | 7 | 8 | | 16.3 | |
| Գերմաներեն | 17 | 25 | 9 | 7 | 8 | 8 | | 15.6 | |
| Մաթեմատիկա | 17 | 25 | 9 | 7 | 8 | 8 | 8 | 16,4 | 17,5 |
| Երաժշտություն | 17 | | | 8 | | | | | |
| Կերպարվեստ | 17 | | | 8 | | | | | |
| Ես և շրջակա | 17 | | | 7 | | | | | |
| Հայրենագիտ. | | | | | | | | | |
| Բնագիտ. | | | | | | | | | |
| Աշխարհագրություն | | 25 | 9 | | 7 | 8 | | 14 | |
| Հայոց պատմ. | | 25 | 9 | | 8 | 8 | | 16,5 | 17,6 |
| Համ. Պատմ. | | 25 | 9 | | 7 | 8 | | | |
| ՀԵՊ | | 25 | | | 8 | | | | |
| Հասարակ. | | 25 | 9 | | 7 | 8 | | | |
| Հանրահաշիվ | | 25 | 9 | | 8 | 7 | | | |
| Երկրաչափ. | | 25 | 9 | | 7 | 8 | | | |
| Ինֆորմ. | | 25 | 9 | | 7 | 7 | | | |
| Ֆիզիկա | | 25 | 9 | | 8 | 8 | | 16,5 | |
| Քիմիա | | 25 | 9 | | 8 | 7 | | 14,2 | |
| Կենսաբանություն | | 25 | 9 | | 8 | 7 | | 17.5 | |
| Տեխնոլոգիա | 17 | | | 9 | | | | | |
| ՆԶՊ | | 25 | 9 | | 7 | 7 | | | |
| ֆիզկուլտուրա | 17 | 25 | 9 | 9 | 8 | 8 | | | |
| Շախմատ | 17 | | | 8 | | | | | |
| Ընդամենը | 17 | 25 | 9 | 7,8 | 7,5 | 7,64 | 8,175 | 16,04 | 17,6 |

*2022-2023 ուստարվա 4-րդ,9-րդ,12-րդ դասարանների սովորողների վերջնարդյունքների համեմատական վերլուծություն*

| Ուսումնական առարկաներ | Սովորողների թիվը | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների քննությունների միավորների միջինը |
|---|---|---|---|

| | 4-րդ դաս. | 9-րդ  դաս. | 12-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-ր. դաս. | 12-րդ դաս. | 4-րդ դաս. | 9-րդ դաս. | 12-րդ դաս. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայոց լեզու** | 20 | 9 | 22 | | 7.3 | 8 | | 16,8 | 18,3 |
| **Մայրենի** | 20 | | | 8.5 | | | 8,56 | | |
| **Գրականություն** | | 9 | 22 | | | 8 | | 17,4 | |
| **Ռուսացլեզու** | 20 | 9 | 22 | 6,3 | 7.2 | 8,3 | | 16,5 | |
| **Գերմաներեն** | 20 | 9 | 22 | 8,5 | 7.9 | 8 | | 16.9 | |
| **Մաթեմատիկա** | | | | 8 | | | 8,35 | 15,7 | 17,8 |
| **Երաժշտ.** | | | | 8 | | | | | |
| **կերպարվեստ** | | | | 8,2 | | | | | |
| **Ես և շրջակա** | | | | 7,3 | | | | | |
| **Հայրենագիտ.** | | | | | | | | | |
| **Բնագիտ.** | | | | | | | | | |
| **Աշխարհագրություն** | | 9 | 22 | | 8.2 | | | 15,8 | |
| **Հ. Պատմ.** | | 9 | 22 | | 8 | 8 | | 17,9 | 17.3 |
| **Համ. Պատմ.** | | 9 | 22 | | | 8 | | | |
| **ՀԵՊ** | | | | | | | | | |
| **Հասարակագիտ.** | | | | | | 8 | | | |
| **Հանրահաշիվ** | | | 22 | | 8 | 7,9 | | | |
| **Երկրաչափ.** | | | 22 | | 7,2 | 7,8 | | | |
| **Ինֆորմ.** | | | 22 | | 7,92 | 8,3 | | | |
| **Ֆիզիկա** | | | 22 | | 8,1 | 8,02 | | 18 | |
| **քիմիա** | | | 22 | | 8,03 | 8 | | 15,4 | |
| **Կենսաբանություն** | | 9 | 22 | | 7.5 | 8 | | 18 | |
| **Տեխնոլոգիա** | | | | 7,8 | | | | | |
| **ՆԶՊ** | | | | | 8 | 8,2 | | | |
| **Ֆիզկուլտուրա** | | 9 | | 7,8 | 8 | 8 | | | |
| **Շախմատ** | | | | 7,6 | | | | | |
| **Ընդամենը** | 20 | 9 | 22 | 7,9 | 8,5 | 8,03 | 8,455 | 16,84 | 17,8 |

*2022-2023 և 2023-2024 ուստարիների տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների դինամիկայի վերաբերյալ*

| **Քննական առարկաներ** | **Քննությունների միջին միավորների փոփոխությունը** | | |
|---|---|---|---|
| | **Քննությունների միջին միավորների աճի տոկոսը** | | |
| | **4-րդ դաս.** | **9-րդ դաս.** | **12-րդ դաս.** |

| | | | |
|---|---|---|---|
| Մայրենի | 2,51% | | |
| Հայոց լեզու և գրական. | | 4,865% | 2,234% |
| Մաթեմատիկա | 4,375% | 4,859% | 1,714% |
| Ռուսաց լեզու | | 1,226% | |
| Գերմաներեն | | 8,3% | |
| Հայոց պատմություն | | 8,484% | 1,734% |
| Կենսաբանություն | | 2,857% | |
| Ֆիզիկա | | 9,09% | |
| Քիմիա | | 8,45% | |
| Աշխարհագրություն | | 12,5% | |

*Սովորողների ուսումնառության որակական և շարունակականության  ցուցանիշներ*՝

| | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Գերազանցիկ | 26 | 25 | 28 | 25 | 20 |
| Մեդալակիր | - | - | - | - | - |
| Հատուկ նմուշի վկայական | 0 | 2 | 2 | 3 | 0 |
| Միասնական քննություն հանձնող | 3 | 3 | 7 | 3 | 4 |
| ԲՈՒՀ ընդունվածներ | 3 | 4 | 8 | 4 | 4 |
| Միջնակարգ դպրոց ավարտածներ | 15 | 7 | 14 | 9 | 8 |

2020-2021 ուստարվա շրջանավարտներց 4-ը ընդունվել են ԲՈՒՀ, 1-ը անվճար: 2021-2022 ուստարվա շրջանավարտներից 8-ը ընդունվել են ԲՈՒՀ, որից 2-ը անվճար: 2022-2023 ուստարվա շրջանավարտներից  4-ը ընդիունվել  են ԲՈՒՀ, որից 2-ը անվճար: Հայ կրթական հիմնարկությունը բարձր առաջադիմություն ցուցաբերելու համարմեր դպրոցն ավարտած  Հերացու անվան բժշկական համալսարանում  սովորող ուսանողին կրթաթոշակ են տրամադրել: 2022-2023 ուստարվա շրջանավարտներից  4-ը ընդիունվել  են ԲՈՒՀ,որից 1-ը անվճար:

Ներկայացված տվյալների արդյունքում սովորողների առաջադիմությունը 100% է, ակնկալվող վերջնարդյունքներով ուսման որակը աճել է 4%-ի չափով:

Ուսուցիչների քրտնաջան աշխատանքի շնորհիվ մենք այսօր ունենք բավականին բարելավված արդյունք,որը ակնհայտորեն տեսանելի է: Արձանագրված ցուցանիշները  սովորողի ձգտումն ու դիրքորոշումն է, ծնողի վերաբերմունքը, մանկավարժի մասնագիտական որակները,ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետ  կառավարումը, կազմակերպումը և իրականացումը:

### 1.2. Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծություն

Հանրակրթության ոլորտում վերջին տարիների իրականացվող բարեփոխումները առավել մեծ պատասխանատվություն են դրել ուսուցիչների

վրա՝ աշխատանքային նոր ռազմավարություններ, նոր մեթոդաբանություն և այլն : Բովանդակային փոփոխության է ենթարկվել ուսուցչի կողմից կազմակերպվող մասնագիտական աշխատանքների պլանավորման գործընթացը՝ պետական չափորոշիչներին ու առարկայական ծրագրերին համապատասխան թեմատիկ պլանավորումների, դասապլանների, ուսումնական նախագծերի թեմաների, արտադասարանային խմբակների ծրագրերի, պլանների կազմում, որոնց հիմքը սովորողների կարողունակությունների ձևավորումն ու զարգացումն է: Շատ կարևոր է, որ բոլոր մանկավարժական ու վարչական աշխատողներն իրենց աշխատանքներն իրականացնեն՝ հիմք ընդունելով պետական կառավարման ներկայիս քաղաքականությունը, չշեղվեն չափորփոշչահեն կրթության բովանդակությունից: Դիտարկենք ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական հմտությունների առանձնահատկությունները և փորձենք վեր հանել մասնագիտական զարգացման կարիքները, որպեսզի հասկանալի լինի, թե որքանով են ուսումնական հաստատության մանկավարժները արդյունավետորեն իրականացնում կրթական գործընթացը և արդյոք գործընթացը համապատասխանում է կրթական բարեփոխումների քաղաքականության պահանջներին: Հետևապես քաղաքականության լիարժեքությունը պայմանավորված է նաև մանկավարժների մասնագիտական զարգացմամբ: Ուսուցիչների մասնագիտական զարգացումը ներառում է տարբեր հմտությունների և կարողությունների զարգացում, որոնք միասին հանգեցնում են կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, կարիքների գնահատման շրջանակներում անհրաժեշտ է բացահայտել զարգացման կոնկրետ ոլորտը և հատուկ հմտություններն ու կարողությունները: Գնահատման նպատակն է բացահայտել առկա բացերը, որոնք ուսուցիչները կարող են լրացնել մասնագիտական որակը բարելավելով:Արդի Հանրակրթության բարեփոխումներն առաջարկում են շարունակական բարելավման շրջանակ, որը ներառում է կարիքների բացահայտում, ապացույցների վրա հիմնված միջամտություն, իրականացման պլան, իրականացման գործընթաց և արձագանք:Այսպիսով, կարիքների գնահատումը հիմք է հանդիսանում ուսուցիչների շարունակական զարգացման գործընթացի, ինչպես նաև կրթական կառուցվածքի պոտենցիալ բարելավման համար:

2024-2025 ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Կառավարության N216 որոշման համաձայն դպրոցում աշխատող մանկավարժներն են՝
Տնօրեն պաշտոնը թափուր է /23.05.2024թ-ից/.

Տնօրենի տեղակալ ուսումնական գծով. 2023թ.-ին նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստվել է որպես տնօրենի տեղակա: Տվյալ պահին չի դասավանդում:

Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող. Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան չի վերապատրաստվել Տվյալ պահին չի դասավանդում:

Սովորողների դաստիարակության գծով կազմակերպիչ. 2023 թվականին նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստվել է որպես սովորողների դաստիարակության կազմակերպիչ:

Զինղեկ. Ունի կապիտանի կոչում: Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան վերապատրաստման կարիք ունի:

Գրադարանավար. Որպես գրադարանավար նոր ՀՊՉ պահանջներին համապատասխան չի վերապատրաստվել և կարիք ունի վերապատրաստման:

Լաբորանտ. Ունի համապատասխան մասնագիտական կրթություն/բարձրագույն: Կարիք ունի նոր ՀՊՉ-ի պանանջներին համապատասխան վերապատրաստման:

Հոգեբան. Մասնակցել է մասնագիտական վերապատրաստումների,այդ թվում նաև «Առողջ ապրելակերպ» խմբակի վարման:

Ուսուցչի օգնական Դպրոցում աշխատում է երեք ուսուցչի օգնական: երկուսը մասնակցել են վերապատրաստմանը են որպես ուսուցչի օգնական: Երրորդը՝ կարիք ունի վերապատրաստման

Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ. Մասնակցել է մասնագիտական տարբեր վերապատրաստումների:

Ուսուցիչներ՝ Դպրոցում աշխատում են թվով 22 ուսուցիչ. բոլորն ունեն մասնագիտական որակավորմամբ բարձրագույն կրթություն:

- 22 ուսուցիչ՝ 2024-2025ուստարվա դրությամբ / սահմանված ժամանակացույցով մասնակցել են պարտադիր վերապատրաստումների և ատեստավորվել: Հետևապես ՀՀ Կառավարության նոր որոշման շրջանակներում ԴԿՏ հարթակում մասնագիտական կարիքի գնահատում չի իրականացվել:
- 2023 թվականին 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները վերապատրաստվել է նոր ՀՊՉ- ի պահանջներին համապատասխան:
- 2 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման և ատեստավորվել:Վերջիններս արձանագրել 65% և 69% արդյունք,որի հիմքով ստանում են հավելավճար՝դրույքը 200.000դր
- 1 ուսուցիչ մասնակցել է դասագրքերի փորձագիտական աշխատանքներին
- 1 ուսուցիչ մասնակցել է առարկայական գնահատման չափորոշիչների մշակմանը:
- Տնօրենի ուսումնական գծով տեղակալը մասնակցել է «ԹԻՉ» դասալսման գործիքակազմի կիրառման վերապատրաստմանը
- 3 ուսուցիչ մասնակցել են նախարարության, ինչպես նաև այլ կազմակերպությունների՝ «ԱՅԲ»կրթական հիմնադրամի կողմից կազմակերպած ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրին
- 10 ուսուցիչ այս պահի դրությամբ մասնակցում են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստմանը՝ գնահատման տեսակների արդյունավետ կիրառման թեմայով, մեկ ուսուցիչ էլ՝ հակակոռուպցիոն թեմայով
- 1 ուսուցիչ մասնակցել է ԹԳՀԳ առարկայի դասավանդման վերապատրաստմանը
- 3 ուսուցիչ մասնակցել են մեդիագրագիտության վերապատևաստմանը, որը կազմակերպվել էր ԿԶՆԱԿ-ի կողմից
- 2 ուսուցիչ այս պահի դրությամբ մասնակցում են Ֆար Լար Հայաստան կրթական հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստմանը՝ Լաբսթեր առցանաց կրթական լաբորատորիաները դասարանում թեմայով
- Տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան
- Վերապատրաստող, մենթոր ուսուցիչներ չկան
- ՈՒստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը 6
- ՈՒսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը 25
- Ուսուցիչների միջին տարիքը 40
- 2023-2024ուստարում ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 20.2%
- 2024-2025ուստարում ուսուցիչների շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 27.5%

*Մանկավարժական համակազմի մասնագիտական զրգացման կարիքների ընդհանուր բնութագիրը:*

| | |
|---|---|
| Թվային և տեխնոլոգիական միջոցների կիրառման դժվարություններ | 30% |
| Կարողունակահեն դասապլանները բովանդակային առումով ճիշտ և նպատային կազմելու դժվարություններ | 30% |
| Դասավանդման ժամանակակից մեթոդների և ռազմավարությունների կիրառման դժվարություններ | 20% |
| Չափորոշչահեն գնահատման գործընթացում կոմպետենտության պակաս | 10% |
| Էլեկտրոնային մատյանները լրացնելու դժվարություններ | 25% |
| Կրթական օժանդակ ռեսուրսների կիրառման դժվարություններ | 60% |

| | |
|---|---|
| Սովորողների կրթական կարիքների բացահայտման դժվարություններ | 30% |
| Կազմակերպչական հմտությունների պակաս | 20% |
| Ինքնակրթության դժվարություններ | 9% |

Ըստ իրականացված վերլուծության առաջին և կարևոր հիմնախնդիրը նորարարների պակասն է, առանց որոնց անհնարին է դառնում ապահովել ուսումնադաստիարակչական գործընթացի բարձր որակական և քանակական ցուցանիշներ, այն էլ կրթական բարեփոխումների այս կարևոր շրջափուլում: Հետևապես ուսուցիչների մասնագիտական որակական մակարդակները բարելավելու, բացահայտված բացերը, թերությունները,դժվարությունները, մասնագիտական կարիքները բավարարելու համար՝

- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվություն, խորհրդակցություններ
- Փորձառու ուսուցիչների,ինչպես նաև հրավիրված մասնագետների աջակցությամբ կազմակերպել վերապատրաստումներ, դասընթացներ չափորոշիչի դրույթները արդյունավետ կիրառելու և սովորողների ուսման որակը բարելավելու համար
- Ապահովել ուսուցիչների մասնակցությունը պարտադիր ատեստավորման վերապատրաստումներին
- Աջակցել և խրախուսել ուսուցիչներին մասնակցելու կամավոր ատեստավորման, որակավորման տարակարգի ստացման ընթացակարգերին
- ՀՀ ԿԳՄՍՆ նախարարի հրամանով սահմանված ուսուցչի մասնագիտական չափանիշների պահանջներին համապատասխան նպաստել ուսուցիչների կարողունակությունների և հմտությունների զարգացմանը
- Աջակցել մանկավարժական աշխատողներին մասնակցելու տարբեր հարթակներում կազմակերպվող առկա, հեռավար ձևաչափով կազմակերպվող վեբինարներին, սեմինարներին,քննարկումներին
- Օգնել սկսնակ ուսուցիչներին, տրամադրել նրանց անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներ
- Կազմակերպել փոխադարձ դասալսումներ և կատարել փոխադարձ գնահատում
- Հաճախակի դարձնել նախագծային աշխատանքների իրականացումը համաձայն ՀՊՉ-ի ր առարկայական ծրագրերի, որոնք ևս կնպաստեն մանկավարժական համակազմի մասնագիտական որակների կատարելագործմանը
- ՏՀՏ գործընթացի ներդրման ընդլայնման միջոցով հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա ազատ օգտվել համացանցից:
- Համագործակցել ԿԶՆԱԿ-ի հիմնադրամի և մենթոր դպրոցի հետ
- Խորհրդատվական ծառայություններ և օժանդակություններ ստանալու նպատակով մանկավարժներին ուղղորդել օգտվել ԿԶՆԱԿ հիմնադրամի պաշտոնական կայք էջում տեղադրված ուսումնաօժանդակ նյութերից և գրականությունից:
- Դասալսումների ընթացքում կիրառել Թիչ գործիքներ
- Նպաստել մանկավարժական աշխատողների ինքնակրթության ծրագրերի իրականացմանը,տրամադրել անհրաժեշտ միջոցներ, տեղեկատվություն, ուսումնամեթոդական նյութեր և այլն:

***Ուսուցիչների մասնակցությունները և ձեռք բերումները՝***

Կենսաբանության ուսուցիչը մասնակցել է Դասգրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից «Դասագրքաստեղծման աշխատանքներում ուսուցիչների մասնակցություն» ծրագրին,և ստացել է 3 կրեդիտ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 20-Ն /09.06.2022թ./ հրամանով հաստատված «Հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ

գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգի» բնություն առարկայի փորձագիտական հանձնաժողովում որպես փորձագետ:
Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի Հարավային Կովկասում կազմակերպած դասընթացին ուսուցիչը մասնակցել է և հաջողությամբ ավարտել է «Թափոնների կառավարում» բնապահպանական դասընթացը
Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի Հարավային Կովկասում կազմակերպած դասընթացին ուսուցիչը մասնակցել է և հաջողությամբ ավարտել է «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» բնապահպանական դասընթացը
Գերմանական միջազգային համագործակցության ընկերության»Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի Հարավային Կովկասում կազմակերպած դասընթացին ուսուցիչը մասնակցել է և հաջողությամբ ավարտել է «Կենսաբազմազանությունը գյուղական և քաղաքային շրջաններում» բնապահպանական դասընթացը
Ինֆորմատիկայի ուսուցիչը մասնակցել է «Հայ կրթական հիմնարկության» և «Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների կենտրոն»ԳԿՀ-ի կողմից իրականացվող «Վեբ ծրագրավորում» վերապատրաստման դասընթացին:
**Ինքնակրթություն:** Կարևորում եմ յուրաքանչյուրի ինքնակատարելագործման գործընթացը,քանզի՝ ինքնակրթությունը անձի անհատական ճանաչողական գործունեության ձև է: Ինքնակրթությունը վճռորոշ դեր է խաղում անձնական աճի և մասնագիտական զարգացման գործում: Շարունակական ինքնակրթությունը բարձրացնում է ինքնավստահությունը և ձեռք բերված նոր գիտելիքներն և հմտությունները դարձնում ուսուցչին ավելի ինքնավստահ մարտահրավերներին դիմակայելու, տեղեկացված որոշումներ կայացնելու և նպատակներին հասնելու հարցերում: Այն հնարավորություն է տալիս ազատվել սահմանափակումներից, ընդլայնել մասնագիտական հորիզոնները և ստեղծել ավելի լավ ուսուցում: Հետևապես մոտիվացիայի համակցությամբ, պետք է հասցնել նրան որ ինքնակրթության գործընթացը իրականացվի կամավոր,գիտակցաբար և պլանավորված: Պետք է կատարելագործել ցանկացած որակ և հմտություններ: Այս համատեքստում նպատակաուղղված եմ առանձնակի ուշադրության կենտրոնում պահել գործընթացը և տրամադրել կաբինետ, ՏՀՏ և տեղեկատվական տեխնիկական այլ միջոցներ, ստեղծել առարկայական, օրենսդրական, ուսուցման և մեթոդաբանության էլեկտրոնային բազա:
**Մանկավարժների խրախուսում.** Յուրաքանչյուր մանկավարժ արժանի է արժևորման և կատարված տքնաջան աշխատանքը պետք է կարևորել և տալ արժանի գնահատական՝ գովեստի խոսքով, պարգևատրել պատվոգրով, պարգևավճարով ներկայացնելով ծնողական և մանկավարժական խորհուրդներում, լուսաբանել դպրոցի կայք էջում: Դպրոցում պահպանվում է մանկավարժներին արժևորելու և խրախուսելու ավանդույթը,որը կունենա շարունակական բնույթ:

### 1.3.Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ուսումնական հաստատության համագործակցության ուժեղ և թույլ կողմերի նկարագիրը.

Դպրոցի հաջողված արդյունավետ գործունեության ամենակարևոր գործոնը ներքին (խորհրդակցական մարմիններ,կառավարման խորհուրդ,մանկավարժական համակազմ,սովորողների համակազմ) և արտաքին (կրթության կառավարման մարմիններ,ծնողական համայնք շահագրգիռ կազմակերպություններ) նպատակային և հեռանկարային համագործակցություններն են,որի հիմքում պետք է դրվի համապարփակ, բազմամոդալ գործիքակազմ, որը կոչվում է Գործընկերություն հանուն սովորողների հաջողության:Վերջինիս արդյունքում ուսումնական տարիների

ընթացքում դպրոցը կատարել է իր առջև դրված խնդիրը՝ բավարարել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքը ապահովվելով պարտադիր նվազագույնը և ակնկալվող վերջնարդյունքները:Ստորև ներկայացվել են համագործակցությունների ուժեղ և թույլ կողմերը, նպատակադրվելով ուժեղ կողմի արդյունավետության ապահովում և թույլ կողմի համակարգում,զարգացում:

Դպրոցի գործունեության ուսումնադաստիարակչական, կառավարման, վարչատնտեսական ոլորտների աշխատանքները կազմակերպելու համար դպրոցը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ : Ստորև ներկայացվում են համագործակցությունների ուժեղ և թույլ կողմերի նկարագիրը,որն էլ հիմք է հանդիսացել տվյալ ոլորտի նպատակների և խնդիրների սահմանմանը:

*Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ. ՀՀ* Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ/որպես լիազորված մարմին/, մինչ խոշորացումը, համագործակցությունը իրականացվել է գյուղապետարանի հետ: Համայնքը խոշորացվել է 2021 թվականին և կոչվում է. Խոշորացված Վարդենիս համայնք: Համագործակցության շրջանակներն են

Դպրոցի գործունեության օրենսդրության պահպանում և կիրառում, բնականոն գործունեության ապահովում, համագործակցային ընդհանուր կառավարում, վերահսկողության իրականացնում

Կրթական ծրագրերի իրականացման ներգրավածություն

Շենքային պայմանների, ենթակառուցվածքների բարելավում

Նյութատեխնիկական բազայի համալրում, ֆինասական միջոցների և անհրաժեշտ ռեսուրսների հատկացում

Նախաձեռնված միջոցառումների՝ հոբելյանական, տոնական, ռազմահայրենասիրական, հիշատակի օր, սպորտային մրցույթների, համայնքային աշխատանքների՝ շաբաթօրյակների, ծառատունկի մասնակցություն

2022 թվականին լիազոր մարմնի կողմից անհատույց դպրոցին տրամադրվել է հետևյալ գույքը՝ գրատախտակ՝ 3 հատ, ցուցատախտակ, սեղան աշակերտական՝ 18 հատ, աթոռ՝ 36 հատ, գրասեղան՝ 3 հատ, ուսուցչի աթոռ՝ 3 հատ, կախիչ՝ 3 հատ, գրապահարան՝ 3 հատ:

*Դպրոցի համագործակցությունը կրթության պետական կառավարման մարմնի հետ.* ներառել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և նրա կառույցների ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ԴՇՀ, ՏՄԱԿ հետ համագործակցությունները յուրաքանչյուրի գործառույթների շրջանակներում՝

ՀՀ կառավարության որդեգրած կրթական քաղաքականության և դպրոցի գործունեության համապատասխանության ապահովում

Սովորողների կրթական կարիքների ապահովում՝պետության կարիքներին համապատասխան

Հանրակրթական ծրագրերի իրականացնում

Հանրակրթության բարեփոխումների նոր չափորոշիչի ներդնում և կիրառում

Սովորողներին դասագրքերով ապահովվում

ՌԻսուցիչների մասնագիտական զարգացման համապատասխան վերապատրաստումների ապահովում

ՌԻսումնական գործընթացների թվայնացման ապահովում և ՏՀՏ-ի միջոցով ուսուցման կազմակերպում

Ներառական կրթության արդյունավետության ապահովում

2024-2025ուստարում դպրոցի լաբորատորիաները վերանորոգվում են պետության միջոցներով,իսկ գույքը և անհրաժեշտ պարագաները տրվել է«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից:

2020 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ և «» համայնքի համատեղ ֆինասավորմաբ, ինչպես նաև դպրոցի հետ համագործակցության շնորհիվ ամբողջովին կատարվել են վերանորոգման աշխատանքներ և բացվել է նախակրթարան՝ 100 ք.մ. տարածքով: Նախակրթարանի մուտքը առանձնացված է, առկա է 1-դասասենյակ, միջանցք/ հանդերձարան , սանհանգույց, իսկ գույքը տրամադրվել է ՄԱԿ-ի

գրասենյակի կողմից: Նախակրթարանի համար ծախսված ընդհանուր գումարը կազմել է 7 700 000 ՀՀ դրամ: Նախակրթարում գործում է մեկ խումբ՝ 16 սան: 2022 թվականին «Պարենային համաշխարհային ծրագրի» և լիազոր մարմնի համատեղ ֆինասավորմամբ, ինչպես նաև դպրոցի անմիջական մասնակցությամբ ամբողջովին վերանորոգվել է ճաշարանը՝ 100 ք.մ. մակերեսով: Վերջինս համալրվել է նոր տեխնիկայով և գույքով: «Տաք սնունդ» ծրագրի շրջանակներում սնվում են 1-4 դասարանի 74 սովորող և նախակրթարանի 16 սան, ընդհանուր՝ 90 երեխա:
ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվել են թանգարանների, պատկերասրահների, թատրոնների արոնեմենտներ: Մանկավարժական աշխատողները և ծնողները կազմակերպում են սովորողների այցը ինչպես մարզի, այնպես էլ Երևան քաղաքի մշակութային կենտրոններ:

*Դպրոցի համագործակցությունը կառավարման խորհրդի հետ.* Մինչ կառավարման նոր համակարգի ներդրումը դպրոցի տնօրենը կառավարման խորհրդին է ներկայացվել դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսական գործունեություններին վերաբերող սահմանված փաստաթղթերը,այդ թվում,դպրոցի զարգացման կատարողականը, քննարկման,հավանության,հաստատման համար: Նոր համակարգի շրջանակներում ՝ներկայացվելու է ուսումնադաստիարակչական գործունեության փաստաթղթերը,դպրոցի զաչգացման ծրագրի կատարման հաշվետվությունները, վերջինիս հիման վրա կառավարման խորհրդի կողմից տրվելու է եզրակացություն:

*Դպրոցի համագործակցությունը ծնողական համայնքի հետ.* Ծնողական համայնքը մշտապես մասնակցել է դպրոցի կողմից կազմակերպվող աշխատանքներին, միջոցառումներին: Մինչև 2023թ. դպրոցի շենքի ներսում սանհանգույց չի եղել և բոլորը օգտվել են դրսի սանհանգույցից: 2023թվականին գյուղի բնակչի կողմից դպրոցի շենքի ներսում հիմնանորոգվել է թվով երկու սանհանգույց՝տղաների և աղջիկների համար

*Դպրոցի համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ.* հասարակական, ոչ առևտրային, ինչպես նաև միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների հետ ներառել է՝

Սովորողների կրթական կարիքների բավարարման համար նախաձեռնությունների իրականացում

Կրթական այլ ծրագրերի ապահովում սովորողների կարողունակությունների ձևավորման,զարգացման և մասնագիտական կողմնորոշման համար Բարեգործական, նպատակային ֆինասական միջոցների և/կամ ուսումնական ռեսուրսների ներդրում սովորողների կրթական կարիքների ապահովման համար

Արտադպրոցական դաստիարակության զարգացում

Սովորողների սոցիալականացման ապահովում

Մանկավարժների մասնագիտական լավագույն փորձի փոխանակում, վերապատրաստումներին ակտիվ մասնակցության աջակցում *Դպրոցի համագործակցությունը Գերմանիայի դեսպանատունը* «Հայ ձմեռ պապ» և *«Արեգնազան կրթահամալիրի»* հետ,վերջիններիս կողմից բացվել է նկարչական սենյակ համալրված բոլոր անհրաժեշտ պարագաներով

*Դպրոցի համագործակցությունը Հայ ամերիկյան կրթական հիմնարկության* կողմից կազմակերպած դասընթացից հետո դպրոցին նվիրեցին 2 համակարգիչ և տպիչ

*Դպրոցի համագործակցությունը Հայաստանի պատանեկան նվաճումներ կազմակերպության* հետ, ձեռնարկատիրարական կրթություն առարկայի դասընթացի շրջանակներում կազմակերպվել է տոնավաճառ ,որին մասնակցել են մեր դպրոցի «Ժպիտ» ԱԳԸ-ի անդամները

*Դպրոցի համագործակցությունը Աղանդավորական շարժման դեմ պայքարի* շրջանակներում դպրոցում բացվեց «Աղանդավորական շարժման դեմ պայքարի» խմբակ, սովորողների ակտիվ մասնակցության արդյունքում Մայր աթոռ եկեղեցին նվիրել է դպրոցական գույք՝ 20սեղան, 40աթոռներ և 2 պահարան

*Դպրոցի համագործակցությունը «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հետ* 2016 թ-ին ԱՏՁՄ-ի և «Վորլդ վիժն»-ի համագործակցությամբ

ստեղծվել է ինժեներական լաբորատորիա ամբողջական գույքով և տեխնիկական միջոցներով Ռոբոտաշինություն ծրագիր ուսուցանելու համար: Այս խմբակը նպաստեց աշակերտների ալգորիթմական մտածողության զարգացմանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանը: 2016թ-ից առ այսօր սաների 65% ընդունվել են տեխնիկական բուհեր

*«Վորլդ վիժն Հայաստան»* զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպության միջոցով բացվել է «Բեմական խոսք» խմբակ,երեխաների ակտիվ մասնակցության արդյունքում նրանց կողմից վերանորոգվել է դասասենյակը

Ավագ դասարանի սովորողները մասնակցել են «Վորլդ վիժնի» կողմից կազմակերպված «Բանավեճի ակումբ» դասընթացներին,որի արդյունքում մարզային փուլը հաղթահարելով անցել են հանրապետական փուլ

Վորլդ վիժն ի կողմից դպրոցին տրամադրել է գույք ԻՄՓԱՔԹ ակումբի կողմից կազմակերպվող շաբաթական հանդիպումների ժամանակ օգտագործելու նպատակով: Նվիրաբերվող գույքի գինը 329,400 ՀՀ դրամ

*Դպրոցի համագործակցությունը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ* Տարբեր ժամանակահատվածներում ուսուցիչները մասնակցել են ծրագրերի դասընթացներին

*Դպրոցի համագործակցությունը բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ* Ուսումնական հաստատությունների տարբեր մասնագետների,արվեստի գործիչների հետ կազմակերպվել են հանդիպումներ,այցեր:Նրանց կողմից կազմակերպվել են քննարկումներ,վարպետաց դասեր,գործնական աշխատանքներ: Համագործակցության միջոցով սովորողների մոտ ձևավորվել է հարգանք և հետաքրքրություններ տարբեր արվեստների, մասնագիտությունների ,ազգային մշակույթի,գիտությունների նկատմամբ:

*Դպրոցի համագործակցությունը համայնքի գրադարանի հետ.* Համագործակցության շրջանակներում դպրոցի սաները օգտվում են գրադարանից և հենց գրադարանում ուսուցիչների գլխավորությամբ կազմակերպում տարբեր բնույթի միջոցառումներ և իրականացնում գրքի քննարկումներ աշակերտները միջոցառում են կազմակերպել

**Ուժեղ կողմ**

Ձևավորվել է նոր միասնական կառավարման խորհուրդ

ԿԳՄՍՆ-ի,մարզային կրթության վարչության հետ առկա է մշտական և շարունակական երկուստեք համագործակցություն

Առկա է շահագրգիռ կազմակերպությունների հետ դրական արդյունքներով համագործակցություններ

Դպրոց- համայնք համագործակցությունը շոշափելի է հատկապես մշակութային, սպորտային ոլորտներում

Զարգացման փուլում է մեդիագրագիտությունը՝ռոբոտաշինության ոլորտում

Կարևորված է սովորողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացումը,մասնագիտական կողմնորոշումը

Արդյունավետ ներդրվել է նոր չափորոշիչը ԿԶՆԱԿ,ԿՏԱԿ,ՏՄԱԿ համագործակցությունների արդյունքում

**Թույլ կողմ**

Համայնքի հետ կապը թույլ է, կարիք կա համայնքի անդամների շրջանում հաճախակի կազմակերպել իրազեկող բնույթի աշխատանքներ

Համայնքի հետ համագործակցության մասով բավարար չափով հետաքրքրված չեն նաև դպրոցի խորհրդակցական մարմինները

Դպրոցը չի դիտարկվում, որպես համայնքային կենտրոն

Շահառու կազմակերպությունների հետ առկա համագործակցությունները կարիք ունեն՝ համատեղ միջոցառումների, հանդիպումների, նախագծերի,սոցիալական ծրագրերի թվաքանակի ավելացման

Մանկավարժական աշխատողները պասիվ մասնակցություն են ցուցաբերում ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող մրցույթներին,միջոցառումներին
Կարիք կա ավելացնել նոր համագործակցություններ կենսական կյանքի բարելավման և պետական կրթական քաղաքականության արդյունավետ իրականացման համար

## 1.4 Խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերի նկարագիրը
### Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ:
***Մանակավարժական խորհուրդ*** Ուսումնական տարիների ընթացքում մանկավարժական խորհուրդը մասնակցել է դպրոցի կառավարմանը, որոշել է գործունեության հիմնական ուղղությունները,բացահայտել անկումային ուղղությունները, գտել նոր ուղեցույցներ,իր առջև դրել նոր խնդիրներ և առաջադրանքներ, բարելավել և զարգացրել ուսումնական գործընթացը լուծելելով ուսումնական հաստատության ուսումնական գործունեության խնդիրները:Այս ամենին զուգահեռ տեղին է նշել,որ նկատելի է պասիվ, չնախաձեռնող, առաջարկություններով, դիտարկումներով հանդես չեկող մանկավարժներ,հետևապես մանկավարժական խորհրդի գործունեության համար կարևորում եմ այն քայլը, որը կհամախմբի մանկավարժներին և կզարգացնի նրանց ներուժը սովորողների ուսման և մանկավարժների մասնագիտական որակները բարելավելու համար:Դպրոցում աշխատող բոլոր մանկավարժները մանկավարժական խորհրդի անդամներ են:Օրենքի շրջանակներում իրենց կազմից ընտրել են կառավարման խորհրդի մեկ անդամ:
***Մեթոդմիավորումներ*** Սովորողների համար արդյունավետ, մատչելի ուսուցում կազմակերպելու և դասավանդող ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու համար դպրոցում ձևավորվել են առարկայական մեթոդական միավորումներ: Դպրոցում դասավանդող բոլոր ուսուցիչները մեթոդական միավորներման անդամներ են: Մեթոդական միավորումների նիստերը գումարվել են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Առարկայական մեթոդական միավորումների գործունեության նպատակն է՝տրամադրել ուսուցիչներին անհրաժեշտ մեթոդաբանության առանձնահատկությունները և կիրառման գործիքները,խթանել նրանց ստեղծագործական ունակության և ներուժի զարգացմանը, առաջնորդել զարգացնելու ժամանակակից ՏՀՏ-ների և նոր մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման կարողունակությունները: Միևնույն ժամանակ՝ առարկայական մեթոդմիավորումների աշխատանքների կենտրոնում մանկավարժական աշխատողների միջև առողջ համագործակցության ապահովումն է, օրինակելի փորձի փոխանակումն ու մեթոդական աջակցության տրամադրումը սկսնակ և դժվարություններ ունեցող ուսուցիչներին: Մանկավարժական խորհրդի նիստերում ներկայացվել են մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների կատարողականի հաշվետվություններ:Մեթոդական միավորումների գործունեության շրջանակներում կարևորում եմ նրանց նախաձեռնությամբ արդյունավետ փորձի դիտարկումը և տեղայնացումը, համագործակցային արդյունավետ մեթոդների կիրառումը, դասալսումների արդյունքների օբյեկտիվ գնահատումը,որոնց հիմքով կձևավորվի վարքագիծ՝ արդյունավետ ուսուցման և մասնագիտական զարգացումը կազմակերպելու համար: Դպրոցում գործում են՝ *Հումանիտար առակարների, Բնագիտական առարկաների, Օտար լեզուների, Ընդհանուր տեխնիկական առարկաների զարգացման, Մաթեմատիկա և Ինֆորմատիկա առարկաների, Տարրական կրթության մասնախումբերը*:

*Ծնողական խորհուրդ* Դպրոցում, բոլորի իրավունքները պաշտպանված և առողջ, ապահով միջավայրի պահպանման, սովորողների որակյալ կրթությունն ապահովելու գործում միշտ կարևորվել է ծնողների դերը: Դպրոցի ծնողական խորհուրդը,որպես ներկայացուցչական մարմին, նպատակ է ունեցել համակարգել և ինտեգրել դպրոցի և ընտանիքի ջանքերը, ստեղծելով պայմաններ բարոյապես կայուն և ֆիզիկապես առողջ սովորողի անհատականության ձևավորման և զարգացման համար: Ծնողական խորհուրդն աջակցել և օգնել է հնարավորինս ներգրավելու ծնողներին իրենց երեխաների ուսման մեջ և դպրոցական կյանքում:Այնուհանդերձ նկատելի է ծնողների պասիվություն,հետևապես կարևորում եմ ծնողական խորհուրդի միջոցով ծնողների ամբողջական ներգրավածությունը, աջակցությունը դպրոցի զարգացմանը և համայնքի հետ կապեր հաստատելու անհրաժեշտությունը, հեշտացնելով հաղորդակցությունը, տրամադրելով խորհրդատվական տեղեկատվություն, աջակցելով կրթական նախաձեռնություններին, ինչպես նաև ձևավորել և զարգացնել այնպիսի միջավայր, որտեղ բոլոր ծնողները համոզված են, որ իրենց կարծիքները, առաջարկությունները, կարևոր են ու լսելի, իսկ համատեղ քննարկումների և օբյեկտիվ լուծումների արդյունքում էլ դրանք կարող են իրական փոփոխությունների հիմք դառնալ սովորողի կրթության բարելավման համար:

*Աշակերտական խորհուրդ* Աշակերտական խորհուրդը ինքնավար մարմին է, որի միջոցով ներգրավվել են սովորողներին ուսուցման և դաստիարակության գործընթացներում համագործակցելով դպրոցի տնօրենության,մանկավարժների և ծնողների հետ:Դպրոցի աշակերտական Խորհուրդը կազմված է տարբեր տարիքային խմբերի՝ 6-9-րդ դասարաններից՝ յուրաքանչյուրից ընտրված մեկական ներկայացուցիչ: Սովորողների միջոցով ձևավորվել են *Մշակութային, Ուսումնադաստիարակչական, Սոցիալառողջապահական, Ռազմամարզական, Տեղեկատվական հանձնախմբեր*: Բոլոր հանձնախմբերը աշխատանքները կազմակերպել են իրենց ձևավորման նպատակներին և բովանդակությանը համապատասխան:Հանձնախմբերը ձևավորվել և աշխատանքները մշակվել են աշակերտական խորհրդի նիստերի ընթացքում: Կարևորում եմ աշակերտական խորհուրդի դերը,որը պետք է խթան հանդիսանա սովորողների ներառականության, ներգրավվածության և առաջխաղացման համար,ինչպես նաև հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների մոտ առաջնորդության, հաղորդակցության, թիմային աշխատանք կազմակերպելու հմտություններ, բռնության կանխարգելման աշխատանքներում նրանց ամբողջական ներգրավվածությունը, տնօրինության կողմից խրախուսումը և աջակցումը աշակերտական խորհրդին՝ դպրոցի գործունեության շրջանակներում ցուցաբերած ակտիվության և մասնակցային որոշումների կայացման համար, նրանց կողմից դպրոցի խնդիրների քննարկման և դրանց լուծումների գործընթացներին մասնակցության համար,նաև իրենց նախաձեռնությամբ իրականացվող միջոցառումների իրականացման համար,ապահովելով և դպրոցի տնօրենության հետ հետադարձ կապ:

*Ժողովրդավարություն.* Ուսումնական տարիների ընթացքում նախկին տնօրենի առաջնորդությամբ դպրոցում ձևավորվել է արժեհամակարգերի մշակույթ, որը պարտադիր կունենա շարունաաակակականություն,ավելին կապահովվի բոլոր ոլորտներում դրա զարգացումը: Ձևավորված մշակույթը հնարավորությունն է տվել միմյանց հետ փոխազդեցության արդյունքում /ուսուցիչ- սովորող, ուսուցիչ-ուսուցիչ, տնօրենություն-մանկավարժ,ուսուցիչ-ծնող և այլն/ որոշումներ կայացնողներին հանգեցնելու բանակցությունների այնպիսի լուծումների, որոնք նպաստել են բոլոր կողմերի համար զարգացման մակարդակ: Դպրոցում բազմակարծությունը դիտարկվել է նախապայման, որպեսզի կրթության գործընթացը լինի սովորողի համար մտավոր և բարոյական, իսկ մանկավարժների՝ ինքնաիրացման և մասնագիտական աճին ուղղված արդյունավետ գործընթացներ:Ձևավորված արժեհամակարգերը ապահովվել են դպրոցական կյանքի անվտանգությունը, սովորելու ցանկությունը: Կարևորում եմ դպրոցում ձևավորված ներառական մշակույթի զարգացումը, որը և՛ սովորողներից, նրանց ծնողներից, և՛ մանկավարժներից պահանջել է փոխադարձ հարգանք, արդյունավետ հարաբերություններ,հաղորդակցություն, ակնկալիքների վերաբերյալ հստակ ըմբռնումներ: Դպրոցի սոցիալական ներառումը, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների, ապահովվել է մասնակցության պայմանների բարելավում, գործընթացների հնարավորությունների ընդլայնում, ռեսուրսների հասանելիություն:Մասնակիցների յուրաքանչյուրի ձայնի և իրավունքների հարգման միջոցով բացառվել են խտրականությունը, ապահովելով ակտիվ ներգրավվածությունը, մասնակցային որոշումների կայացմանը:

**ՈՒժեղ Կողմ**

Դպրոցում ձևավորված են բոլոր խորհրդակցական մարմինները որոնք սահմանված կարգով իրականացնում են իրենց գործառույթները

Դպրոցում խրախուսվում է բազմակարծությունը, սովորողները մասնակցում են իրենց վերաբերյալ քննարկվող հարցերի շուրջ որոշումների կայացմանը Դպրոցում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն, ստեղծված են ներառական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ որոշակի պայմաններ
Դպրոցում իրականացվում են բռնության, օտարման, վնասակար սովորույթների դեմ պայքարի կանխարգելման միջոցառումներ, որոնց մասնակցում են սովորողները,մանկավարժները և ծնողները
Դպրոցի մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական գործընթացին առնչվող բոլոր հարցերը,այդ թվում նորարարությունների հերդրումը և կատարելագործումը
Իրակացվում են դասալսումների քնարկումններ, վերլուծություններ, աջակցող խորհրդատվություններ,փորձի փոխանակում և տարածում
Սահմանված կարգով ներդրվում և արդյունավետ կիրառվում են նոր չափորոշիչի պահանջները
Մեթոդական միավորումներն ապահովում են ուսումնական գործընթացի մոնիթորինգի իրականացումը, մանկավարժներին մասնագիտական աջակցությունների ցուցաբերումը
Ծնողական խորհուրդը մասնակցություն է անենում դպրոցի նախաձեռնած միջոցառումներին, առաջարկություններ ներկայացնում սովորողների կրթության բարելավման ուղղությամբ
Աշակերտական խորհուրդը ներգրավված է միջոցառումների, քննարկումների, բանավեճերի կազմակերպման աշխատանքներում
Առկա է աշակերտական խորհրդի և սովորողների միջև փոխհամագործակցություն
Սովորողները մասնակցում են իրենց վերաբերյալ քննարկվող հարցերի շուրջ որոշումների կայացմանը

**Թույլ Կողմ**

Խորհրդակցական մարմինները չեն համագործակցում մարզի այլ դպրոցների խորհրդակցական մարմինների հետ
Խորհրդակցական մարմինների իրազեկվածությունը, համատեղ հանդիպումները, քննարկումները և ծրագրերի իրականացումը կարիք ունի ավելացման և բարելավման
ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցումը կազմակերպելու համար շենքային պայմանները բարելավման կարիք ունեն
Դպրոցի գործընթացների մասնակցային կառավարումը և որոշումների կայացումը կարիք ունի բարելավման
Մանկավարժական խորհրդի նախաձեռնողականությունը կարիք ունի մոտիվացիայի
Կարիք կա մոտիվացնելու ծնողների ամբողջական ներգրավածությունը և նրանց կողմից աջակցությունը
Կան պասիվ, չհամագործակցող, սոցիալական հմտություններ չունեցող սովորողներ:
Ծնողական խորհրդի աշխատանքը գոհացուցիչ չի կարելի համարել, առկա է կազմակերպչական հմտությունների և համախմբվածության պակաս:

### 1.5 Հաստատության շենքային պայմաններիվերլուծությունը, ուժեղ կողմերը և թերությունները

ՀՀ Գեղարքունիկի մարզի Լուսակունք գյուղի միջնակարգ դպրոցը շահագործման է հանձնվել 1977 թվականին:Դպրոցը տարածքում միակն է:Սովորողների թիվը համապատասխանում է ՀՀ կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: Շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգության նորմերին:Դպրոցի տարածքը ցանկապատված է հեռացված ավտոճանապարհային գոտուց (5 կմ), աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ շենքին: Դպրոցում պահպանված են սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ: Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ: Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում և

անհրաժեշտ վայրերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով:Տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն: Աշխատակիցները և սովորողները իրազեկված են և ուսումնական տարահանման ժամանակ պահպանում են նորմերը:Դպրոցը երկհարկանի է,բաղկացած մեկ շենքից: Շենքի ընդհանուր մակերեսը 1658,00 մ$^2$ է: Շենքի ընդհանուր վիճակը գնահատվում է բավարար,սակայն կարիք ունի վերանորոգման:

***Ենթակառուցվածքներ***

Առաջին հարկում առկա է՝ Ճաշարան 72մ$^2$ Մարզադահլիճ 184մ$^2$ Հանդերձարաններ ընդ.12 մ$^2$ (տղաների և աղջիկների) Գրադարան 24մ$^2$ Երկու սանհանգույց ընդ.12մ$^2$ (տղաների և աղջիկների) 4 հատ դասասենյակ ընդ.272մ$^2$ Մեծ միջանցք 123մ$^2$ , Նախակրթարան 100մ$^2$ Մեկ հատ մուտքի/ելքի դուռ Արհեստանոց 18մ$^2$ Պահեստ 16մ$^2$

Երկրորդ հարկում առկա է՝ 8 հատ դասասենյակ ընդ.380մ$^2$ ՆԶՊ կաբինետ 27մ$^2$ Զենքի պահեստ 6մ$^2$ Համակարգչային կաբինետ 24մ$^2$ Ֆիզիկայի կաբինետ/լաբորատորիա 36 մ$^2$ Քիմիայի/Կենսաբանության կաբինետ /լաբորատորիա 27մ$^2$ Արմաթ ինժեներական լաբորատորիա 72մ$^2$ Աշխարհագրության լաբորատորիա 24 մ$^2$ Տնօրենի կաբինետ 20 մ$^2$ Ուսուցչանոց 54 մ$^2$ Մեծ միջանցք 115մ$^2$ Պահեստ 16 մ$^2$ Օժանդակ տարածք 24մ$^2$

***Նյութատեղնիկական բազա***

համակարգիչ 2 Windows 10 համակարգիչ, 3 Windows 7 Պատճենահանող սարք 2 հատ Ցրիչ 1 հատ Ֆիզիկայի,Քիմիայի դպրոցական լաբորատոր պարագաներ առկա են Կենսաբանության դպրոցական լաբորատոր պարագաներ առկա են Սպորտային գույք առկա է Դասագրքեր,գեղարվեստական գրքեր առկա են Աշակերտական սեղան աթոռներ առկա են սովորողների թվաքանակով Գրատախտակներ առկա են Պահարաններ,վարագույրներ առկա են Բժշկական պարագաներ առկա չէ Էլեկտրոնային գրատաղտակ առկա չէ Տեսախցիկներ առկա չեն

Ընդհանուր առմամբ ըստ վերը նշվածի շահագործման ժամանակից առ այսօր դպրոցը իր առկա նյութատեխնիկական բազայի միջոցով կատարել է իր առջև դրված հիմնախնդիրը,այն է պետական քաղաքականության իրականացում, ապահովելով յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքը:Սակայն կարևորում են այն փաստը,որ նոր չափորոշչի շրջանակներում իրականացվող բարեփոխումները պահանջում են ավելի հզոր, նյութատեխնիկական բազան արդիականացված, ժամանակակից նորմերին համապատասխանող դպրոց:Ստորև ներկայացված է դպրոցի շենքային պայմանների ուժեղ կողմը և թերությունները:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄ | ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| • 2024-2025ուստարվա սկզբին ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ հիմնադրամի կողմից փուլային տարբերակով տրամադրվել է չորս անուն լաբորատոր գույք՝ /Քիմիա-Կենսաբանություն,Ֆիզիկա, Աշխարհագրություն, Համակարգչային/ Այս պահին վերանորոգման աշխատանքներ են իրականացվում Ֆիզիկայի, Քիմիա/Կենսաբանության,Աշխարհագրության և Համակարգչային կաբինետներում<br>• Դպրոցի տանիքը ամբողջությամբ վերանորոգված է, պատուհանները և հատակը փոխված են 50%-ի չափով<br>• Ինտերնետ կապ<br>• Շուրջօրյա շրամատակարարում, էլեկտրականություն | • Դպրոցը չունի՝ հանդիսությունների դահլիճ, բուժկետ, նկուղ,ապաստարան,,ռետուրս,հոգեբանի,համակարգողի,տնօրենի տեղակալների,շախմատի,օտար լեզուների կաբինետներ<br>• Դպրոցում առկա բոլոր ենթակառուցվածքները կարիք ունեն վերանորոգման, նոր գույքով համալրման և կահավորման,բացառությամբ՝Քիմիա-Կենսաբանություն,Ֆիզիկա, Աշխարհագրություն, Համակարգչային կաբինետների<br>• Անհրաժեշտություն կա տեխնիկական միջոցները համալրել ժամանակակից տեխնիկայով |

| | |
|---|---|
| • Գազաֆիկացված է,ամբողջ շենքը ջեռուցվում է, բակում առկա է կաթսայատուն<br>• Դպրոցի տարածքը ամբողջությամբ ցանկապատված է<br>• Շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգության նորմերին | • Դպրոցը չունի այգի, ելքի/մուտքի լրացուցիչ դռներ, մուտքի մոտ առկա չէ թեքահարթակ |

## 2. Նպատակների և խնդիրների սահմանում

### 2.1 Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում

| Նպատակ | Խնդիրներ | Գործողություններ | Ժամկետ | Անհրաժեշտ միջոցներ | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ | Արդյունքների չափման մեխանիզմներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ուսումնական գործընթացի քանակական և որակական արդյունքների բարելավում | 1.Սովորողների սովորելու մոտիվացիայի խթանում, աշխատունակության բարձրացում | Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան՝<br>1.Սովորողների նախասիրությունների և հետաքրքրությունների շրջանակներում ձևավորել արտադասարանական խմբեր, կազմակերպել ուսանելի պարապմունքներ<br>2.Յուրաքանչյուր սովորողին տրամադրել առնվազն մեկ նախագծային թեմա, իրականացնել արդյունավետ աշխատանքներ<br>3.Զափորոշիչը ներդրված դասարաններում ցածր առաջադիմություն արձանագրած սովորողներին ընդգրկել | Ուսումնական տարիների ընթացքում | 1.Խմբակների ծրագրեր ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված,թեմատիկ պլաններ,ՏՀՏ և ուսուցման անհրաժեշտ այլ միջոցներ,խմբակավարի հաշվետվություններ Մարդկային ռեսուրս<br>2.Նախագծային թեմաներ հաստատված տնօրենի կողմից, թեմատիկ պլաններ, ՏՀՏ և ուսուցման անհրաժեշտ այլ | Որոշ սովորողների կողմից հետքրքրության պակաս<br><br>Որոշ ուսուսուցիչների մոտ առկա դժվարություններ | Սովորողների շրջանում կազմակերպել մոտիվացիոն զրույցներ, թեմատիկ քննարկումներ, մասնագիտական կողմնորոշման ուղղված սեմինարներ Խրախուսել առաջադիմող սովորողներին | Տվյալ ուսումնական տարվա և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով մշտադիտարկման, ներքին գնահատման և մանկավարժական խորհրդին ներկայացված հաշվետվությունների տվյալների համեմատական վերլուծության արդյունքում՝ սովորողները ունեն սովորելու բարձր մոտիվացիա, այդ են վկայում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | երկարօրյա խումբ, կազմակերպել ուսուցում<br>4. Չափորոշիչը չներդրված դասարանների 1-3 միավոր արձանագրած սովորողների համար կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ<br>5.Ներդնել նոր առարկայական ծրագրեր ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված<br>6.ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելամիտ հարմարեցումների միջոցով կազմակերպել մատչելի ուսուցում<br>7.Ուսուցման ընթացքում ինտեգրել ՏՀՏ և կիրառել ուսուցման նոր մեթոդներ և մոտեցումներ<br>8.Նպատակային և արդյունավետ կիրառել սովորողների գնահատման նոր տեսակները<br>9.Կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ և խրախուսել սովորողներին առարկայական օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցելու նպատակով<br>10.Ձևավորել համագործակցություններ և համատեղ իրականացնել կրթական այլ ծրագրեր | | միջոցներ,ուսուցչի հաշվետվություններ Մարդկային ռեսուրս<br>3.Դասղեկի կամ ուսուցչի կողմից ներկայացված դիմում,ուսուցման թեմատիկ պլան և այլ միջոցներ,ուսուցչի հաշվետվություններ Մարդկային ռեսուրս<br>4.Լրացուցիչ ուսուցման թեմատիկ պլաններ և այլ միջոցներ Մարդկային ռեսուրս<br>5.ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորված առարկայական ծրագրեր,թեմատիկ պլաններ,դասագրքեր,ՏՀՏ և և ուսուցման այլ միջոցներ Մարդկային ռեսուրս<br>6.Գնահատված կարիք, ԱՈՒՊ, աջակցման ծառայության պլան, պարզեցված ծրագրեր,խելամիտ հարմարեցումներ,կաբինետ,պարագաներ,ՏՀՏ և ուսուցման | | Օժտված և ետ մնացող սովորողների համար ախպահովել ուսումնական հարմարավետ միջավայր Դպրոցի ներուժի ներդրմամբ աջակցել ուսուցիչներին հաղթահարել ու առկա դժվարությունները | մնացորդային գիտելիքների ստուգման բարձր ցուցանիշները:սովորողների ցանկությամբ ավելացել են արտադասարանական խմբակների թիվը, արձանագրվել է առարկայական և միջառարկայական նախագծային ,հետազոտական աշխատանքների թվի աճ, երկարօրյա ուսուցման և լրացուցիչ պարապմունքների արդյունքում գրանցվել է ցածր առաջադիմություն ունեցողների թվի նվազում, դպրոցական բաղադրիչների արդյունավետ կիրառման միջոցով ներդրված նոր առարկաների թվի և հետաքրքրությունների ավելացում, արդյունավետ ներառական կրթության մակարդակի բարձրացում,ծնողների դրական |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | այլ միջոցներ Մարդկային ռեսուրս 7.Թեմատիկ պլաններ,ՏՀՏ և այլ հաղորդակցման միջոցներ,ուսումնական դիդակտիկ նյութեր,ինտերնետ կապ,էլեկտրոնային առարկայական բազա,սովորողակենտրոն,ինտերակտիվ, շրջված դասարան և այլ ուսուցման մեթոդներ և այլ միջոցներ,արդյունքների վերլուծություններ Մարդկային ռեսուրս 8.Հայտորոշիչ,ձևավորող,ամփոփիչ գնահատման տեսակներ,ձևեր,մեթոդներ,ձևաթղթեր,ՏՀՏ և այլ միջոցներ Մարդկային ռեսուրս 9.Առարկայական ծրագրեր,թեմատիկ պլաններ,ժամանակացույց, առաջադրանքներ, արդյունքների վերլուծություններ Մարդկային ռեսուրս | | | արձագանքների թվաքանակի ավելացում,գնահատման նոր տեսակների կիրառմամբ սովորողների կարողունակությունների զարգացման բարձ ցուցանիշ և ուսումնառության լիարժեք վերահսկողության առկա մեխանիզմներ, գրանցվել է համագործակցությունների, համատեղ իրականացված կրթական այլ ծրագրերի և սովորողների մասնակցության թվաքանակի աճ, առարկայական օլիմպիադաների և այլ մրցույթների մասնակիցների թվի ավելացում և արձանագրաված մրցանակային տեղեր, սովորողակենտրոնով, ինտերակտիվ և այլ նոր տեխնոլոգիաներ կիրառող ուսուցիչների մեծամասնություն,ուսուցման և |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 10.Համագործակցու թյունների անհրաժեշտ պայմանագրեր,հուշ ագրեր, կրթական երաշխավորված ծրագրեր, աշխատանքային պլան,ժամանակացո ւյց,ՏՀՏ և ուսումնական ռեսուրսներ Մարդկային ռեսուրս | | | դաստիարակության գործընթացներում լիարժեք ինտեգրված ՏՀՏ –ով դասերի,միջոցառում ների,գործնական,նա խագծային աշխատանքների թվաքանակի ավելացում, սովորողների առաջադիմության բարձր ցուցանիշներ և ուսման որակի ավելացում արձանագրվածից 10% -ի չափով |
| | 2.ՀՊՉ-ով սահմանված սովորողներ ի ուսումնառու թյան կարողունակ ությունններո վ վերջնարդ-յունքների բարելավում | ՆԴՎ-ով սահմանված ժամկետներում և գործիքակազմի միջոցով կազմակերպել մշտադիտարկում,որի համար՝<br>1.Ձևավորել հանձնախումբ<br>2.Սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման համար կազմել առաջադրանքներ,տալ տնօրենի հաստատմանը և բոլոր դասարաններում հանձնարարել<br>3.Իրականացնել դասալսումներ<br>4. Վերլուծել սովորողների ուսումնառության արդյունքները և մշակել բարելավման աշխատանքներ | ՆԴՎ-ով սահմանվ ած ժամկետն երում | ՆԴՎ, §Թիչ¦գործիքներ,սով որողներին տրվող առաջադրանքներ, արդյունքների վերլուծություններ, ձևաթղթեր,մանկավ արժական խորհրդի կողմից սահմանված դասալսումների ժամաքանակ և որոշումներ,բարելա վման նոր մեթոդներ,հաշվետվ ություններ Մարդկային ռեսուրս | Մշտադիտա րկման ավարտին ոչ օբյեկտիվ գնահատում | Մշտադիտար կում իրականացնե լ բոլոր ուղղությունն երով,տարբեր մակարդակնե րով, համակողման ի վերլուծությու ններ և նոր միայ համատեղ կատարել գնահատում | Տվյալ ուսումնական տարվա և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով ՆԴՎ-ի , ներքին գնահատման և հանձնախմբի կողմից մանկավարժական խորհրդին ներկայացված հաշվետվություններ ի տվյալների համեմատական վերլուծության արդյունքում գրանցվել է սովորողների բացթողումների բարելավման |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մեթոդների թվի ավելացում, սովորողների առաջադիմության բարձր ցուցանիշներ և ուսման որակի ավելացում արձանագրվածից 10% -ի չափով |
| | 3.Սովորողների մասնագիտական կողմնորոշման աջակցում | 1.Համագործակցել այլ ուսումնական հաստատությունների հետ. (դպրոց-ԲՈՒՀ, դպրոց-միջին մասնգիտական ուսումնական հաստատություններ,դպրոց-այլ կազմակերպություններ)<br>2.Կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ,համատեղ գործնական աշխատանքներ և միջոցառումներ, որոնք ուղղված են սովորողների կողմից մասնագիտության ընտրությանը<br>3.ԿԳՄՍՆ-ի սահմանած կարգի համաձայն կազմակերպել «Մասնագիտական կողմնորոշում» պարտադիր արտադասարանական խմբակների պարապմունքները | Ուսումնական տարիների ընթացքում | ԲՈՒՀ-երի, միջին մասնագիտական,արհեստագործական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության պայմանագրեր, աշխատանքային պլան,ժամանակացույց, արտադասարանական խմբակի հաստատված ծրագիր և թեմատիկ պլան,մասնագիտական կողմնորոշում պարունակող տեղեկատվական նյութեր,տեսաֆիլմեր,ՏՀՏ և ուսումնական այլ նյութեր Մարդկային ռեսուրս | Որոշ սովորողների մոտ ոչ հաստատուն դիրքորոշում | Համագործակցել ծնողների և դպրոցի հոգեբանի հետ | Տվյալ ուսումնական տարվա և նախորդ երկու ուսումնական տարիների կտրվածքով մշտադիտարկման, ներքին գնահատման և մանկավարժական խորհրդին ներկայացված հաշվետվություններ ի տվյալների համեմատական վերլուծության արդյունքում՝ավելացել է համագործակցությունների, համատեղ իրականացված գործնական աշխատանքների և միջոցառումների, տարբեր միջոցների կիրառմամբ արտադասարանական արդյունավետ պարապմունքների թիվը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
